

## ՔԱՂՎԱԾՔ

Արմավիրի մարզի Ղալարիկ գյուղական համայնքի բնակչության ընդհանուր ժողովի.

13.07.2011թ.

Ժողովը նախագահում էր՝ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ռ. Սահակյանը  
Ժողովը քարտուղարում էր՝ աշխատակազմի քարտուղար՝ Ս. Շահբազյանը  
Ժողովին ներկա էին 85 բնակիչ, բուժամբուլատորիայի , երկաթգծի , դպրոցի  
տնօրենները և աշխատակիցները, համայնքի ղեկավարի աշխատակազմը,  
ավագանու անդամներ, մարզպետարանի ներկայացուցիչ գլխավոր աուդիտ  
Արամ Հովհաննիսյանը:

Լսեցին. Արմավիրի մարզի Ղալարիկ գյուղական համայնքի ղեկավարի  
հաշվետվությունը 2011 թվականի առաջին կիսամյակում կատարված  
աշխատանքների վերաբերյալ:

Ժողովն արձանագրում է.

2011թ. առաջին կիսամյակի ընթացքում Ղալարիկ գյուղական համայնքում  
կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 45 դիմում, ինչպես նաև  
բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի  
աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են  
համապատասխան լուծումներ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 560  
տեղեկանք , ստացել 70 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր  
կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում  
տրվել պատասխաններ:

- 2011թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի  
վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են  
պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ  
շենքերի բակերը, սպորտ-հրապարակի տարածքը:

-Նախագինակոչային տարիքի պատանիներից 30-ը ներկայացել են Արմավիրի  
Զինկոմ և գարնանային զինակոչը գնահատվել է բավարար:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտագրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

- Համայնքում մկնանման կրծողների վնասը վերականգնելու համար ԳԱՄԿ-ի հետ համատեղ կազմակերպվել են միջոցառումներ:

- Կարկտահարության վնասները մասամբ վերականգնելու համար համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և ժողովրդին է բաժանվել տարբեր տեսակի սերմեր նոր ցանքս և սածիլավորում կատարելու համար:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքներ, խմելաջրի քլորացման հարցը լուծվում է ժամանակին:

- 2011թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա) հողի հարկ - 2814.2 հազար դրամ,

բ) գույքահարկ - 761.8 հազար դրամ,

գ) տեղական տուրք - 77.5 հազար դրամ,

դ) ոչ հարկային եկամուտ - 80.0 հազար դրամ:

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, որոնցից են՝

ա) համայնքում նշվել է մարտի 8-ը՝ կանանց միջազգային տոնը, մայիսի 9-ը՝ հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը, Հայաստանի հանրապետության տոնը,

բ) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեց կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն 1500.0 հազար դրամ,

գ) հանրապետության տոնի առթիվ համայնքում կազմակերպվել է միջոցառում, որի համար ծախսվել է 296.3 հազ. դրամ

դ) համայնքում ծառատունկ կազմակերպելու նպատակով ձեռք է բերվել 315.0 հազ. դրամ արժողությամբ պտղատու ծառեր և բաշխվել է համայնքի ազգաբնակչությանը,

ե) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 386.0 հազ. դրամ,

գ) «Հագարամյակի մարտահրավերներ – Հայաստան» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ոռոգման համակարգերի վերականգնման համար կատարվել է 1859.3 հազար դրամ ներդրում և աշխատանքներն ընթացքի մեջ են:

- Համայնքում իրականացվել է համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում, որի համար փոխանցվել է 4200.0 հազ. դրամ
- 4008.2 հազար դրամ ծախսվել է համայնքում նախադպրոցական կրթության հաստատությունում աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:
- 2400.6 հազար դրամ ծախսվել է համայնքում արտադպրոցական դաստիարակության հաստատությունում (երաժշտական դպրոց) աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:
- Մշակույթի տունը գործում է, սակայն շենքը վերանորոգման խիստ կարիք ունի:
- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման:
- Համայնքի առաջնահերթ խնդիր է խորքային հորի հորատումը, որը համայնքի ազգաբնակչությանը կապահովի մշտական ջրով: Այդ նպատակով ձեռնարկվում են միջոցառումներ և աշխատանքներն արդեն ընթացքի մեջ են:

Նիստի նախագահ՝ Ռ. Սահակյան

Նիստի քարտուղար՝ Ս. Շահբազյան

Իսկականի հետ ձիշտ է՝

Աշխատակազմի քարտուղար

Ս. Շահբազյան